## մկդ.

Գոյ այժմ ի ստամպօլ ի մէջ հակառակորդաց նաև կոիւ մի մեծ, և այս է վասն ընտրելոյ զառաջնորդ երուսաղէմի, զի առաջինն՝ որ էր Թորոս վարդապետն՝ մեռաւ։ Արդ՝ պատրիարքն իւրայնովք և բազում աշխարհականօք ընտրեցին զոմն առաջնորդ երուսաղէմի. իսկ ամիրայքն չհաւանեալ ընտրութեան պատրիարքին՝ ընտրեցին զայլ ոմն, և չանան փոխել զպատրիարքն. ուստի և նա ոչ գիտէ զինչ գործէ առ ի հաճոյանալ նոցա։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1762 փետր. 15. [Կ. Պոլիս])։

## մկե.

Վասն պատերազմաց ծանիր, զի սաքսօնիա զօրքն Թագուհւոյն ի դիմի հարեալ զօրացն պրուշի և եղբօր Թագաւորին պրուշից, յաղթեալ են և փախստական արարեալ զեղբայրն պրուշին զօրօքն իւրովք, զբանակն առեալ, և զուլթն հազար կալանաւորեալ։ Ասեն ևս Թէ զեղբայրն պրուշին վիրաւորեալ ի բազուկն։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1762 յունիս 12. Ս. Ղազար])։

## մկզ.

Ի լիբանան եղեալ յունաց պատրիարգն, եպիսկոպոսք և այլովք ոմամբք եկն ի Հռոմ վասն ընդունելոյ զարձակումն նզովիցն, որով նզովեցին զնա ի լիբանան ի կողմանէ պապին, վասն չհնազանդելոյ կարգաւորութեանց սոցա. և միանգամայն վասն արդարացուցանելոյ զինքն։ (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1762 յունիսի 19. [Հռոմ])։

## մկէ.

Սա[1] եկն ի Կոստանդնուպօլիս ի լինիլ մեծաւոր. քանզի եկն հրաման ի սրբոյ ժողովոյն հանել վանել զամենայն կարգաւորսն սրբոյն անտոնի վանուց, որպէս և եղև իսկ. և ի տեղի նոցա զայլ նոր կարգաւորս հաստատել հանդերձ մեծաւորաւ, որ եղև փատրէ ձիվան Կրիգոսթոմոն։ (Աթանաս եպս. առ Մելգոնեան, 1762 յունիս 20. [Կ. Պոլիս])։

## մկը.

Իմացայ զգալուստ հայ եպիսկոպոսին կոչեցելոյ Թիֆլիզցի Գրիգոր վարդապետ...։ Հ. Գրիգորն... իսկապէս գնեաց զմեծ օտալար մի մերձ ի սանթոֆիցն առ սուրբ պետրոսիւ. ունի աւելի քան զյիսուն օտայ. և պարտէզ անհուն. ունի կէլիր տարին 180 սկուտս, գնեաց զայն տասնըչորս հազար տուգաթ։ Սակայն տեղին է իպսիզ. և օդն գրեթէ մահաբեր. և երկնչիմ Թէ այն լիցի լիբանանեցւոց ի կործանումն։ Նաև էառ ի փափէն զՊոէվի, զի արասցէ զայն՝ վանք, և չինեսցի ի նմա եկեղեցի, և կոչեսցէ զանուն նորա Լուսաւորիչ։ (Հ. Մկրտիչ Ա՛ն. առ Մելգոնեան, 1762 յունիս 24. [Հռոմ])։

---

1. «Փատրէ ձիվան Կոիզոսթոմո»։